

Պաշտոն առաքելաւ ասաց. եթէ որ աւետարանեցէ ձեզ աւելի քան զոր ասնէքն, նշովնալ լիցի. և դարձեալ զնոյն երկրորդելով ասէ. Այլ թէ մէք կամ Տրեշտակ յերկնից աւետարանեցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ՝ նշովնալ լիցի. եւ զնոյն հաստատեցին աստուածային շնորհաւքն լցեալ երանելի հարքն. ՅԺԸ. եպիսկոպոսունքն ժողովեալ ի Նիկիայ, միաբանեցին նմին կանոնի և ճ և Ծ եպիսկոպոսունք ուղղափառք ժողովեալք վասն նորին խնդրոյ ի Կոստանդնուպոլսիս, որոց մէք միաբանեալ նշովնալ զհակաաւորդսն այն ճշմարիտ հաւատոյ և կատարեալ աստուածաշնորհ կանոնի. եւ զայս խնդիր ճշմարիտ հաւատոյ գրեցաք և կնքեցաք եւ Բարգէն Հայոց կաթողիկոս ամենայն եպիսկոպոսաւք, իշխանաւք և նախարարաւք Հայաստան աշխարհիս. եւ Սերգիս որում Բարգէն անուն է. Արդիշոյեան խուժիկ ի Հոշորի շահաստանէ, ի նմին յանջմնի՝ առաջի մեր ամենայն Հայոց ասաց թէ այդ այդպէս է. լսեմ՝ յաղազս այդ իրաց և ի Խուժաստանի հերձուածքն են. և յայսմ հաւատոյ ինձ հաւատոյ նամակ պիտի և հաւատոյ նամակ հաստատ և ճշմարիտն և զանաբժարաբէք. եւ ես Բարգէն Հայոց կաթողիկոս և ամենայն եպիսկոպոսունք, և Վարդ Մամիկոնեան, և այլուք միանգամ իշխանք և նախարարք էաք, գրեցաք հայերէն և պարսկերէն՝ և կնքեցաք մերով մատանեալ. Սամուէլի և Հմաւոնի և Աջայի և Մերայի և այլ ընկերակցաց առեալ ի մէջ էր, զոր ի ձեռն Սերգէսեայ կտուն. եւ զայս հաւատո նամակ ընդ իւրեանս առին յաշխարհ իւրեանց. Զնոստաւոր և զանաբժարաւ յամենայնի պթումսն և զշնորհաւք իմ յիշխանի ի Քրիստոս. և զի զայս ասաց զայս և զայս և զայս:

Այս կարեւոր յիշատակարանն անուամբ է Կ. Պոլսոյ Անտոնեան միաբանութեան գրադարանի նշանաւոր «Թղթոց գիրք» ձեռագրից՝ որի մեզ ուղարկած ընդօրինակութեան վերայ միայն կէտադրութիւնն ենք աւելացրել եւ խիստ աչքի ընկնող տառասխալներն ուղղել: Խորին շնորհակալութիւն ենք յայտնում Պատուարժան Միաբանութեան, որ քարեսիրաբար թույլ էր տուել այս եւ մի շարք այսպիսի պատմական մեծ արժէք ունեցող թղթեր ընդօրինակել մեզ համար: Այդ թղթերը շատ լոյս եւս սփռում մեր եկեղեցւոյ պատմութեան ամենամութ շրջանների վերայ եւ մի քանի պատմական—դասական խնդիրների լուծմանը նպաստում: Իրոնցով կըրարունք յաջորդ համարից սկսած:

ԴՐՈՒՋՆԵՐԻ ԿՐԾՆԸ. *

Պատկալում և Ֆրանսիայում մի ժամանակ տարածուած էր այն զրոյցը, թէ Դրուզները մի Ֆրանսիական զաղթականութեան մնացորդներ են, որ Խաչակրաց արշաւանքների միջոցին Դրէօքս կոմսի առաջնորդութեամբ հաստատուել է Լիբանանում: Այդ զրոյցից ճարպիկ կերպով օգտուեցաւ ԺԼ. դարում Դրուզների իշխան Փախըրէզզինը, որ բաւական ընդարձակ երկրի տիրացած լինելով՝ անձամբ Վենետիկ և Փլորենցիա եկաւ և այդ հարուստ վաճառաշահ քաղաքների տաւելութիւնը գէպի իւր թշնամի տաճիկներն աւելի ևս զրգուել աշխատեց: Սակայն հարկաւ այդ զրոյցը ոչինչ հիմք չունի և զուցէ յառաջ է կիկ մասամբ Դրուզների իրենց ծագումը խորհրդաւոր մթութեան մէջ ծածկելու և մահմեդականութեան հետ ունեցած կապերն ուրանալու ջանքից: Մեր դարում միայն կարելի եղաւ հետզհետէ որոշ գաղափար կազմել նոցա կրօնի մասին, երբ նոցա կրօնական գրքերն սկսեցին եւրոպական մատենադարաններ բերել, մանաւանդ երբ 1830 թ.-ին իւրահիմ փաշան Լիբանանը գրաւեց և միանգամից մեծ քանակութեամբ այդպիսի գրքեր ձեռք բնկաւ: Այժմ Դրուզներն աշխատում են ամեն կերպ ամուր պահել այդ գրքերը և թոյլ չտալ, որ օտարներն աւելի մօտ ծանօթանան իրենց կրօնին. բայց դրա փոխարէն մշտական կենդանի հաղորդակցութիւն է տեղի ունենում եւրոպացի միսիոնարների և նոցա մէջ, և այդպիսով շատ բան հրապարակ է կելում:

Ծագմամբ Դրուզների կրօնն անշուշտ սերտ կապ ունի մահմեդական Շիա աղանդի հետ: Եայնանի է, որ այս աղանդին պատկանող Փաթմայեան հարստութիւնը Ժ. դարում տէր դարձաւ Եգիպտոսին և իւր իշխանութիւնը տարածեց նաեւ Ասորիքի մեծ մասի

* Քաղաւ Քրիստիկե Վերլտ 1898, № 31 և 32 մի յօդուածից, որի հեղինակն օգտուել է The Autobiographie of Theophilus Waldmeier գրքից: Իսկ այս գիրքը գրողը՝ Թէօփիլոս Վալդմայէր, երկար ժամանակ իրրե միսիոնար ապրել է Դրուզների մէջ:

վերայ: Շիա աղանդի հետևողներն այսպէս Պարսկաստանի խորքերից սկսած մինչև հիւս-Ափրիկա տարածուած լինելով՝ շփումն ունեին բնականաբար զանազան օտար կրօնների հետ և ենթարկուում էին նոցա մանաւանդ պարս-հին կրօնի ազդեցութեանը:—Արդ, Դրուզ-ներն ընդունում են որ Աստուած տասն անգամ յայտնուել է աշխարհի վերայ մարդու կերպարանքով՝ զանազան տեղեր և զանազան ժամանակներու մի բայց միշտ Փաթմայեան տան անդամների մէջ: Վերջին յայտնութիւնը եղել է էլ-հաքէմի միջոցաւ որ 11 տարեկան հասակում (896 թ.-ին) Փաթմայեանների գահը բարձրացաւ և յայտնի է պատմութեան մէջ իւր մոլեռանդ և դաժան բռնակալութեամբ: Սա հալածել է քրիստոնիաներին, հրէաներին և մահմեդականներին հաւատարմութեան և նորա մոլեռանդութեան զոհերը մինչև 18,000 են հաշուում: Ի միջի այլոց 1009 թ.-ին նա կործանեց ս. Երուսաղէմի տաճարը Երուսաղէմում: Ահա այս էլ-հաքէմի օրով և հանդէս են եկել Դրուզները:

Սորա պալատում երկու պարսիկ քահանաներ կային՝ Էդ-գարադի և Համդէ: Էդ-գարադին միանգամ մզկիթի մէջ հռչակել սկսեց թէ Աստուած մարմնացել է յանձին էլ-հաքէմի և պահանջում էր որ նորան սատուածովայել պատիւներ տան: Այսպիսի անլուր պատգամների վերայ զայրացած ժողովուրդը նորան տեղն ու տեղը սպանեց՝ բայց նորա հետևողները մնացին և «Դրուզ» անունը ստացան: Համդէն զրբեր շարադրեց, որոնց մէջ բացատրում էր նոր կրօնի սկզբունքները և հրատարակեց էլ-հաքէմի մահից յետոյ: Սորա յաջորդն էր որդին Ալի Դահիր, որ պահանջում էր՝ նոյն պատիւները և խոնարհութիւնը ցոյց տալ իրեն: Ինչպէս իւր հօր բայց Համդէն մերժեց առարկելով թէ էլ-հաքէմը աստուած էր իսկ նա հասարակ մարդ է: Հետևաբար և ոչ նորա հարազատ որդին: Ալի Դահիր այն ժամանակ չափազանց զայրացած մերժեց իւր հօր և Համդէի կրօնի սկզբունքները և սատիկ հալածանք հանեց նոցա հետևողների դէմ: որոնք և ցրուելով մինչև Դամասկոս հասան ու հաստատուեցան Լիբանանի վերայ և Հերմոն լեռան մօտերը: Այստեղ

խառնուեցան նոքա մի պարսկական աղանդի հետ և մի քանի արար ցեղերի իրենց կրօնին դարձրին: որով այդ կրօնը ԺԱ. դարից սկսած ամուր արմատ բռնեց Ասորիքում: Վերջին ժամանակ Դրուզները բաւական նուազել են. 1860 թ. ի քրիստոնեաների կոտորածի միջոցին նոցանից շատերը Հաւուրան գաղթեցին և այժմ նոցա ընդհանուր թիւը Լիբանանում Դամասկոսում և Հաւուրանում հազիւ 70,000-ի հասնի:

Համդէի գրուածների մէջ ամփոփուած են Դրուզների կրօնի հիմունքները: Սա ինչպէս էլ-հաքէմին Աստուծոյ տասներորդ մարմնացումն է համարում այնպէս էլ իրեն բոլոր արարածոց արմատ ուղիղ ճանապարհ, ընդհանուր խոհանութիւն: Ճշմարիտ Զրիստոս հաւատացելոց առաջնորդ: Սորա վարդապետութիւնը Աստուծոյ մարմնացման մասին Բ. դարու երեութեանների աղանդի և հին պարսկական կրօնի երկու թեան գաղափարի մի խառնուրդ է ներկայացնում: Աստուած իրական մարմին առնել չի կարող այլ առերևոյթ միայն մարդկային մարմնով յայտնուում է: Ինչպէս բարոյ, այնպէս և չարի սկզբունքը շատ անգամ մարդու կերպարանքով յայտնուել է: Բայց բարին բացորձակ է և յաւիտենական իսկ չարը պատահական և ժամանակաւոր: Համդէի մէջ մարմնացած ընդհանուր խոհանութիւնը առաջին արարածն է, բոլոր բարոյ ամփոփումն ու արտայայտութիւնը, որի միջոցաւ ստեղծուած է ամէն ինչ և որ Աստուծոց բոլրած լինելով ամենամաքուր լոյսն է՝ հակադիրը ամենամուայլ խաւարի: Այս լոյսից կամ ճշմարիտ Մեախայից չորս ազգակից հոգիներ են ելեր, որոնք էլ-հաքէմի ժամանակ մարդկային կերպարանքով յայտնուեցան յանձին Իմայէլի, Մուհամմէդի, Սալմանի և Բէհու Էդ-դէնի (Համդէի չորս զխաւոր կողմնակիցները): որոնք և չորս աւետարանիչների նման ճշմարտութեան սպասաւորներ եղան և փրկութեան ուղեցոյցներ: Սոյն եղանակաւ տեղի է ունեցել նաև խաւարի մարմնացումը՝ իւր բոլոր կատարելութեամբ յանձին Մահմեդականութեան հիմնադիր Մուհամմէդի որի հետ խաւարի չորս

ներկայացուցիչներն են Ալիս Արուսեքը, Օմար և Օթման:

Ինչ վերաբերում է այն հարցին թե ինչպէս է յառաջ եկել չարը՝ Համգէն ասում է ընդհանուր խոհականութիւնը իւր բարձր յատկութեանց վերայ հպարտացած՝ բարձր գիրքից ընկաւ և այդ խորին թշուառութեան մէջ նորանից ծնուեցաւ սատանան կամ բոլոր բարւոյ հակառակորդը որ առաջ գոյութիւն չունէր և այժմ սպառազինած էր խաւարի բոլոր զէնքերով՝ ընդհանուր խոհականութեան դէմ կռուելու համար: Վերջինս սաստիկ նեղուելով առ Աստուած աղաղակեց և Աստուած խղճաց ու հրամայեց որ նորանից չորս օգնական հօգիներ բղխեն: Հակառակորդը նոյնը պահանջեց և Աստուած կատարեց նորա ցանկութիւնն ևս որովհետեւ կամենում էր որ բոլոր արարածոց մէջ բարին ու չարը դրականն ու բացասականը հակակշռեն միմեանց: — Այս վարդապետութեան հետ կապուած է Դրուզներին հաւատը հօգիների փոխադրութեան մասին: Նոքա ընդունում են որ միևնոյն հօգին մարմնանում է շարունակ զանազան մարդոց մէջ: Այդպէս՝ Համգէն հօգին Մովսէսի ժամանակ Յովթորի մէջ էր մարմնացել: Բրիտանոսի ժամանակ Զաքարիայի մէջ: Մահմէդի ժամանակ՝ Սալման էլ-Փարզիի մէջ: Նոյն կերպով սատանայի և իւր չորս օգնականների հօգիները բնակուել են Ագամի, Նոյի, Արրահամի, Մովսէսի, Ահարոնի, Յեսուի, Բրիտանոսի, Պետրոսի, Մուհամմէդի մէջ և լին. որոնք և բոլորեքեան մոլորութեան ներկայացուցիչներ են: Հօգեփոխութեան մասին ունեցած այս հաւատը գլխաւոր պատճառն է որ Դրուզները ոչ մի վատնգից չեն վախենում՝ ոչ տարափոխիկ հիւանդութիւններից, ոչ պատերազմի զնաակից, և ոչ առհասարակ մահից: Մեզ համար մահ չկայ ասում են նոքա մահը մեզ համար մի ուրիշ սենեակ փոխադրուել է: Այդ է և պատճառը որ նոքա այնպիսի արիւթութիւն են ցոյց տուել պատերազմների և կոտորածների միջոցին: Հօգեփոխութեան հաւատով փորձում են նոքա նաև մէկի իսկական դրուզ լինելը կամ չլինելը: Երբ երկու դրուզ միմեանց պատահում են մէկը հարցնում է միւսին. Ո՞ր են ցանում ձեր երկ-

րագործները Էհլէյլիջի (մի անուշահոտ իւզ արտադրող բոյս) սերմը միւսը պատասխանում է. Մեր երկրագործները ցանում են Էհլէյլիջի սերմերը հաւատացեալների սրտերում: Ապա բերում երկու աման են գնում փորձի ենթարկուողի առաջ, մէկը լի ջրով, եթէ օտարականը լի ամանը դատարկի մէջ թափէ, կնշանակէ նա հաւատում է հօգեփոխութեան և կրնգունուի իրրեւ կրօնակից:

Ինչպէս ասուեցաւ, դրուզներն ընդունում են որ Աստուած բոլոր արարածներին ընդհանուր խոհականութեան միջոցաւ է ստեղծել՝ նորանից ելած բարի և չար՝ լուսաւոր և խաւար նիւթից, ուստի իրենք իրրեւ Համգէնի հաւատացողներ, աւելի մօտ լինելով ընդհ. խոհականութեան, աւելի առատ լոյս ունին քան միւս մարդիկ: Սկզբից և եթ մարդիկ նոյն թուով են ստեղծուած, ինչպէս կան այժմ աշխարհում՝ իւրաքանչիւր հօգու համար մի մարմին, մինչև իսկ սեռի, հասակի, զբաղմունքների և ընդունակութիւնների կողմից նոքա նոյն յարաբերական քանակութիւնն են պահպանում և իւրաքանչիւր մեռնողի հօգի իսկոյն անցնում է նոյն բալէին ծնուող մի մանուկի մէջ: Այդ անցումը կարող է տեղի ունենալ միայն կրօնակիցների շրջանում՝ ոչ մի դրուզ չի կարող ուրիշ կրօնի պատկանողների շարքը մտնել, եթէ նա իր կրօնը փոխում է այդ միայն երեւոյթ է իրօք նա նոյն դրուզն է մնում: Այսպիսի համոզմունքով էր որ երբ 1832 թ.-ին իբրահիմ փաշան Ասորիքը զրաւեց՝ շատ դրուզներ կրօնը փոխեցին և մկրտութիւն ընդունեցին, որպէս զի զինուոր չգնան. իսկ երբ ճնշումն անցաւ՝ կրիկն նախկին կրօնին դարձան:

Դրուզներն երկու գլխաւոր դասակարգների են բաժանուում՝ ուքալների կամ իմաստունների, կարգացողների, նօւիրեալների և ջուհալների կամ աղետների, անուսումների: Սակայն շատ քիչ ուքալներ կան որոնք նոքա կրօնի բոլոր խորհուրդներին և զաղանի վարդապետութիւններին ծանօթ լինին, ուստի սոցա մէջ ևս որոշուում են իսկական իմաստունները, որոնք Աստուծոյ հետ սերտ յարաբերութեան մէջ են ապրում և այնպիսիները, որոնք թէպէտ թաղուած են աշխար-

Հային գործերի մէջ, բայց Աստուծոյ օրէնք հասկանում են: կատարել և փրկութիւն ձեռք բերել կարող են: մինչ ջուհակները օրէնքի անտեղեակ լինելով և մարմնի կարիքներին անձնատուր՝ կորստեան և զժողբի են դատապարտուած: Կրկին մի երևոյթ: օր հին արեւելեան կրօններն ու աղանդներն է յիշեցնում: մասնաւորապէս մանիքեցութիւնը:— Ամէնքը վկայում են: որ ուքալները յիրաւի շատ լուրջ և բարոյական կեանք են վարում՝ չեն խմում և չեն ծխում: տղեղ խօսքեր բերանից չեն հանում: Նոցա գլխաւոր զբաղմունքն է Համգէի գրած 111 գլուխները: որ 6 հատորի է բաժանած: կարգալ և բերան անել: Ապա: նոքա են ղեկավարողը հաւատացեալների միատեղ ժողոված միջոցին: որ տեղի է ունենում իւրաքանչիւր հինգշաբթի երեկոյ մի բարձր առանձնացած վայրում: խալվէ կոչուող հասարակ շէնքերի մէջ: Ունկնդիրներին քարոզելուց և խրատելուց յետոյ գլխաւոր ուքալները իրենց մէջ ժողով են կազմում: այն նշանների մասին խօսելու: որոնց կատարման ժամանակ պէտք է յայտնուին Էլ-հաքէմն ու Համգէն: Դրուզները հէնց այժմ մեծ ակնկալութեամբ սպասում են իրենց Մեսիայի յայտնուելուն: Չինաստանի կողմից: որովհետեւ արդէն անցնելու վրայ են այն իննհարիւր տարիները: որից յետոյ Համգէի գուշակութեամբ նա մարդկային կերպարանքով պէտք է երևայ: Վաղեմայէր միսիոնարը հարցրեց մի անգամ ուքալներից մէկին. «Եթէ ձեր ակնկալած Համգէի և Էլ-հաքէմի գալուստը տեղի չունենայ՝ ի՞նչ կանէք այն ժամանակ: «Բողոքական կրօնանք»: պատասխանեց ուքալը: և բացատրեց այդ նորանով: որ եթէ Համգէն այս մի քանի տարուայ միջոցում չյայտնուի՝ կնշանակէ սուտ էր նա Բրիտանիոյ իբրեւ կեղծ և իրեն իբրեւ ճշմարիտ Մեսիա ներկայացնում: և իրենց կմնայ հակառակն ընդունել և անգլիկան եկեղեցւոյ ծոցը մտնել:

Ուքալներն առանձին ուշք են դարձնում կանանց կրթութեան վերայ: կարգալ ու գրել են սովորեցնում նոցա և իրենց կրօնի սրբազան խորհուրդներին ծանօթացնում: Միջին դասակարգը շատ անդեկութիւններ չունի կրօնից: ջուհակները բոլորովին: Շատ ծանա-

պարհորդների տարածած այն ամբաստանութիւնը: թէ դրուզները հորթի են երկրպագում՝ անհիմն է և յառաջացած գուցէ այն հանգամանքից: որ նոքա Ալիին եղ և Մուհամմէդին հորթ են անուանում՝ նոցա արխմար և չար լինելը ցոյց տալու համար: Նոքա ամէն տեսակ կռակաշունթեան հակառակ են: և այդ հարեան քրիստոնեաների (իբրեւ պատկերապաշանների) գէմ ունեցած թշնամութեան գլխաւոր պատճառներից մէկն է: որից քանի անգամ սարսափելի կոտորածներ են յառաջ եկել: ինչպէս օր. 1860 թ.-ին:

Դրուզներն աշխարհի կործանման չեն հաւատում: որովհետեւ նիւթը համարում են յաւիտենական: Երբ Համգէի գուշակած 900 տարին լրանայ: որ Էլ-հաքէմի Եգիպտոսում երևալու տարուց է հաշուում (մահմեդական 400 և քրիստ. 1009—1010 թ.-ին): և եթէ մահմեդական տուժարով հաշուենք արդէն լրացած պէտք է լինի երկու տարի առաջ (այժմ մահմեդ. 1302 թ.-ն է): մինչ ըստ քրիստոնէականին գեռ մինչև 1910 թ. ձգել կարելի է: Էլ-հաքէմը: Համգէն և ընկերները պէտք է երևան և իրենց փառաւոր: երանաւեալ թագաւորութիւնը հաստատեն: Նոցա յայտնութեան նշաններն են Չինական պետութեան կործանումը և մի մեծ պատերազմ քրիստոնէական ու մահմեդական պետութեանց մէջ: Պատերազմի գլխաւոր հանգիստալը պէտք է լինի Մէքկան: որտեղ պէտք է դայ նաեւ: յանձին հաքէմների թագաւոր Յովհաննէսի մարմնացած՝ սասանան իւր զօրքերով: քրիստոնիաներին օգնելու համար: Մինչ այդ՝ յանկարծակի լուր պէտք է տարածուի: թէ Էլ-հաքէմն ու Համգէն իրենց օգնականներով և անթիւ գնաւորով գալիս են Չինաստանից: քրիստոնեաներին և մահմեդականներին ուրիշ բան չի մնայ: բայց եթէ անձնատուր լինել Էլ-հաքէմին: որ կգայ Բաբայի կտրան կնտէ և ահաւոր դատաստան կանէ: նորա հրամանով սաստիկ փոթորիկ և երկրաշարժ կլինի և բոլոր անհաւատներին կարէ երկրի երեսից: Էլ-հաքէմ իւրայիններով Հաուրան կերթայ: հաւատարիմ դրուզներին իւր շուրջը կժողովի և Ղիբանան կբերէ: կմիացնէ երկնայինների երջանիկ զօր-

քին: Այսպէս յաղթական զնույնքով նա զէպի Եղիպտոս կարշաւ՝ ասնելով հետ մարմնացած ստատնային, որին կմարթեն ծանապարհին Ռամբէի և Լիւզայի մէջ: Ապա կահիրէ կգայ, ուր նոր դատատան կլինի նախկին դատատանից ազատ մնացած անհաւատներին համար. քրիստոնեաների մահմեդականների և հրէաների պատիժն այն կլինի, որ ականջների մէջ ծանր արծիճ, երկաթ կամ ապակի պէտք է ունենան՝ ամառը շոգից նեղուն և ձմեռը ջրախց. բայց ամէնից աւելի ծանր կերպով կպատժուին այն գրուղները, որոնք Համզէի հեռանալուց յետոյ անհաւատութեան մէջ են ընկել: Այդպիսով յաւիտեական երանութեան շրջան կսկսուի գրուղների համար: Աստուած կմնայ մարմնով հաւատացեալների հետ և կիշխէ կահիրէում. Համզէն կայսերական փառք ու պատուով կպսակուի իբրեւ ճշմարիտ Մեսիա. իսկ նորա շորս օգնականները թագաւորների նման կլինեն, բոլոր աշխարհ կպատեն, կենդանի մնացած անհաւատներին կհատորեն և բոլոր հարստութիւնները կահիրէ կծողովին՝ ի վայելս գրուղների: Սոքա փառաւոր պալատներում կպարեն, իսկ մահմեդականները, քրիստոնեաներն ու հրէաները սոցա անվարձ ծառաները կլինեն. նոցա մարմնից սարսափելի վարշահատութիւն կբուրէ, բայց միայն իրենց համար զգալի կլինի՝ ոչ գրուղների: Սոցանից իւրաքանչիւրը 120 տարի կպարէ, առանց իւր ուժերը կորցնելու. ապա մի քաղցր քուն կզայ վերան, և այդ միջոցին նորա հոգին առանց որ և է ցաւի կփոխադրուի մի ուրիշ նոր ծրնուող գրուղի մարմնի մէջ: Այսպէս յաւիտեական կերպով կշարունակուի լիէ նոցա երջանիկ՝ և լիէ անհաւատների տաժանելի կեանքը:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Օգոստոս 16-ին Մոսկուայում շատ փառաւոր հանգիստով նոցին Մեծութեանց Օգոստոսիա Վայսեր և Վայսրուհու ներկայութեամբ՝ կատարուեցաւ յանուն Ազգքսանդր Բ. Վայսեր կան.

զնաճ հոյակապ արձանի բացումը. Օրհնութեան կարգը կատարում էր Մոսկուայի մետրոպոլիտ Սրբ. Վլադիմիր, որ և հանդիսից առաջ պատարազ մատոյց Ուսպենսկի Մայր տաճարում Արձանի բացման ներկայ լինելու համար ժողովուած էին բազմաթիւ իշխանական և բարձրաստիճան անձինք, այլ և Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքների քաղաքապետները: Ազգքսանդր համար կանգնած արձանի բացումը մի պարզ հանգէս չէր միայն, այլ երախտագիտութեան և յարգանաց այն հարկը, որ ժամանակակից Ռուսաստանն իւր Ահհայակետով ընծայում է հանգուցեալ Ազգքսանդր Բ. ի մեծամեծ բարենորոգումներով անմահացած թագաւորութեան յիշատակին. խոստովանում նոցա բարերար ազգացութիւնը ստրկական փիճակից ելած և արդար օրէքների պաշտպանութեան ներքոյ մտած ժողովրդի վերաւ խոստանում ընթանալ այսուհետեւ յառաջագիմութեան այն լուսաւոր շաւղով, որ գծել է բարեյիշատակ Ազգքսանդր: Սոյն մեծ հանդիսի առթիւ Թագաւոր Վայսրը բարեհաճեց ս. Անդրէասի ամենաբարձր շքանշանը շնորհել Սրբ. Սինոդի օրեր—պրոկուրոր Պորեգոնոսցէվին—Հանդիսի յաջորդ օրը, օգոստոսի 17-ին, նոցին Վայսերական Մեծութեանց ներկայութեամբ հիմը դրուեցաւ Պետրոսիւսից թանգարանի յանուն Ազգքսանդր Գ. Վայսեր. իսկ 18-ին Մոսկուայի մի նոր բարեգործական հաստատութեան՝ աղքատաց ապաստանարանի հիմը, նոյն օրը Օգոստոսիա հիւրերը հելլէնական Թագուհու և Թագաժառանգի և ուրիշ բարձրաստիճան անձանց ուղեկցութեամբ այցելեցին Տրոյից—Սերգիէվսկի վանքը. իսկ օգոստոս 19-ին ուղեորուեցան զէպի հարաւ և 21-ին հասան Սեաստոպոլ, ուր փառաւոր ընդունելութիւն և ծովահանգէս տեղի ունեցաւ.

— Բուլղարիոյ իշխանի զէպի Ռուսաստան կատարած ճանապարհորդութեան մի տեսակ շարունակութիւնը եղաւ Չերնոգորիայի իշխանին այցելելը. երկու իշխանները հանգիսաւոր ճաշկերպութի միջոցին կենաց բաժանների առթիւ ճառեր արտասանեցին, տեղական մամուլն առաջնորդող յօդուածներ հրատարակեց, որոնք բոլորը պատում են Բուլղանեան թերակղզւոյ այսուան ազգերի եղբայրական միութեան և Ռուսաստանի հզօր հովանու ներքոյ համերաշխ գործունէութեան գաղափարի շուրջը.

— Օգոստոսի 9-ին Պետերբուրգի Հոգեւոր ճեմարանի հանգիսաբանում Սինոդի օրեր—պրոկուրոր Պորեգոնոսցէվի ցանկութեամբ հոգեւոր նուագահանգէս տրուեցաւ ի պատիւ Անդրիայից եկած մի քանի նշանաւոր հիւրերի, գաղափար տալու համար նոցա ուսուց եկեղ. երաժշտութեան մասին: Այդ հիւրերն էին Նիւկէստլի գուբար իւր ամուսնոյ հետ, Օքսֆորդի համալսարանի ուսուցչապետ Բիրկբէկ, որ յայտնի է զէպի օրթոդոքս եկեղեցին